ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՕՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ավելի քան երկու ամիս տևեց հայ գրերի ստեղծող և դպրության հանճարեղ հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի համաժողովրդական տոնակատարությունը Հայաստանում: Հորելյանական իրադարձությունները կարևորագույն տեղ կգրավեն հայ մշակույթի պատմության մեջ: Մաշտոցին նվիրված հորելյանական ժողովներ տեղի ունեցան Մոսկվայում, ինչպես և ՍՍՌՄ եղբայրական ռեսպուբլիկաների մայրաքաղաքներում:

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի տոնակատարությունը անցյալի կուլտուրական հարուստ ժառանգության նկատմամբ լենինյան ազգային քաղաքականության կենսագործման վառ դրսևորումն է: Այդ համաժողովրդական խանդավառությունը հանդիսացավ մեծահանճար Մաշտոցի նկատմամբ ժողովրդի անհուն սիրո, իսկ հիացմունքի և անսահման երախտագիտության արտահայտությունը:

Մեծ հաջողությամբ անցան Մեսրոպ Մաշտոցի 1600-ամյակին նվիրված հորելյանական գիտական նստաշրջանները Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում, Պետական համալսարանում, Մատենադարանում, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Դրանք մեծապես օգնեցին բազմակողմանիորեն հետազոտելու և լուսաբանելու Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը, նրա հանճարեղ հայտնագործության մեծագույն նշանակությունը հայ ժողովրդի ճակատագրի և նրա մշակույթի զարգացման համար:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հանդիսավոր ժողովը բացեց ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը: Նրա հակիրճ խոսքը լսվեց խորին ուշադրությամբ:

«Այսօր մեր ժողովուրդը,— ասաց նա,— տոնում է հայ մեծագույն մտածող, իր հանճարեղ դավակի, հայ գրի ու դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: Մեր մշակույթի պատմությունն տվել է բազմաթիվ կարկառուն դեմքեր, սակայն բոլոր այդ գործիչներից հայ ժողովուրդը ամենից շատ պարտական է Տարոնի գավառի Հացեկաց գյուղի գեղջուկ, Վարդանի որդի Մաշտոցին: Այն աշխատանքը, այն շարչարանքները, որ, ինչպես ասում է ավանդությունը, կրել է նա իր մեծ գյուտի համար՝ հիրավի տիտանական են: Նրա գյուտը հսկայական դեր խաղաց մեր ժողովրդի միասնության, ազգային ինքնուրույնության պահպանման համար:

Այս տարի լրանում է նաև հայերեն առաջին գրքի տպագրության 450-ամյակը: Մենք շատ ն շատ երջանիկ ենք, որ հայ ժողովուրդը մեծ շուքով տոնում է Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: Այդ տոնը նշում են Սովետական Միության բոլոր ժողովուրդները, ամբողջ սովետական երկիրը»:

Այնուհետև «Մեսրոպ Մաշտոցը՝ հայոց գրերի և դպրության ստեղծող» թեմայով զեկուցում կարդաց ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ղարիբյանը: ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ս. Երեմյանի զեկուցումը նվիրված էր «Մեսրոպ Մաշտոցը և նրա ժամանակը» թեմային: Բանասիրական գիտությունների դոկտոր Ն. Տեր-Մինասյանը զեկուցեց հայ գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին:

Հորելյանական հանդիսավոր ժողովի երկրորդ նիստում մաշտոցյան գրերի պատմական նշանակության մասին զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը. հայոց գրերի հնագույն տեսակների մասին՝ պատմական գիտությունների դոկտոր Կ. Ղաֆադարյանը: Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ղանալանյանի զեկուցումը նվիրված էր «Մեսրոպ Մաշտոցը հայ ժողովրդական բանահյուսության մեջ» հարցին: Հայկական ՍՍՌ ԳԱ հորելյանական հանդիսավոր ժողովի նիստերին մասնակցում էին նաև սփյուռքահայ գրողներ ու գիտնականներ:

Երևանի Պետական համալսարանի հորելյանական գիտական սեսիան ներածական խոսքով բացեց համալսարանի ռեկտոր, Հայկ. ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ն. Հարությունյանը: Համալսարանի պրոռեկտոր, դոցենտ Վ. Նալբանդյանը զեկուցեց Մաշտոցի կյանքի ու գործունեության մասին:

Այնուհետև ողջույնի ջերմ խոսքերով հանդես եկան հունգարացի ասպիրանտ Պ. Սալմաշին և լեհ ուսանող Ա. Պիսովիչը: Ապա լսվեց դոցենտ Հ. Փամկոչյանի՝ «Մեսրոպ Մաշտոցի ժամանակաշրջանը» թեմայով զեկուցումը: Մեսրոպյան այբուբենի և ուղղագրության մասին զեկուցեց պրոֆ. Էդ. Առայանը: Մեսրոպ Մաշտոցի աշխարհայացքի բնութագրությանն էր նվիրված փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հ. Խաչերյանի զեկուցումը: «Հայ գրերի ստեղծման թվականը» թեմայով զեկուցում կարդաց պրոֆ. Ա. Աբրահամյանը: Ասիայի հաջորդ նիստում պրոֆ. Մ. Մկրյանը հանդես եկավ «Հայ պատմագրություն հինգերորդ դարում» զեկուցումով: «Մեսրոպյան գրերը, նրանց աղբյուրները և կառուցվածքի սկզբունքները» թեմայով զեկուցում կարդաց պրոֆ. Ռ. Ասակը: «Մեսրոպ Մաշտոցը հայագիր դպրոցի հիմնադիրն է» հարցի մասին խոսեց պրոֆ. Ա. Մովսիսյանը, պրոֆ. Ռ. Պետրոսյանի զեկուցումը նվիրված էր թվագրության հայկական սիստեմին: Դոցենտ Էմ. Պիվազյանի՝ «Նախամեսրոպյան գրի և գրականության հարցի շուրջը» զեկուցումով ավարտվեցին հորելյանական գիտական նստաշրջանի աշխատանքները:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ Մատենադարանի հորելյանական գիտական նստաշրջանը բացվեց Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանի ներածական խոսքով: Այնուհետև պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը բնութագրեց «Վարք Մաշտոցի» աշխատության ժանրային յուրահատկությունները: Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Սարգիսյանը խոսեց Մաշտոցի մանկավարժական ու հասարակական գործունեության մասին: Ապա հանդես եկավ փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ս. Աբեղյանը՝ «Գրերի գյուտը և հայկական հին թարգմանությունները» թեմայով: Ասիայի հաջորդ նիստում հետաքրքրական զեկուցումներ տվեցին Փ. Ենգարյանը, Հ. Փափազյանը, Վ. Գրիգորյանը, լեհ ուսանող Ա. Պիսովիչը, Լ. Խաչերյանը և Ա. Քյոչկերյանը: Մայիսի 25-ի եզրափակիչ նիստում բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Վանալանդյանը զեկուցեց այն մասին, թե ինչու Մաշտոցը առաջին հերթին թարգմանեց Սողոմոնի առակները: Պատմական գիտությունների դոկտոր Լ. Խաչիկյանի զեկուցումը նվիրված էր նախամեսրոպյան գրերի հարցին: Վերջին երկու զեկուցումները նվիրված էին Մաշտոցի բանաստեղծությունների մեկնությանը (զեկուցող՝ բանասիրական գիտ. թեկնածու Ա. Մնացականյաս), հայ հոգևոր երգարվեստին նրա մատուցած ծառայություններին (զեկուցող՝ արվեստագիտության թեկնածու Ն. Թահմիզյան):

Նստաշրջանի մասնակիցները հետաքրքրությամբ ծանոթացան հորելյանական ցուցահանդեսի մատենագրական հարուստ նյութերին:

Հորելյանական գիտական նստաշրջաններ տեղի ունեցան նաև Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, Հ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում և այլ գիտական հաստատություններում:

Հայ ժողովրդի կուլտուրայի մեծ տոնին էր նվիրված մայիսի 27-ին Մոսկվայի Միությունների տան սյունազարդ դահլիճում կայացած հանդիսավոր երեկոն: Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված հորելյանական ժողովը բացեց ՍՍՌՄ Գրողների միության քարտուղար Վ. Կոժևնիկովը: Մաշտոցի կյանքի ու գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ սովետական ականավոր գրող, Հայկ. ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Շահինյանը: Մեսրոպ Մաշտոցի մեծագործության ինտերնացիոնալ նշանակության մասին խոսեցին գրողներ Ն. Ձուրյանը, Մ. Բաժանը, Ս. Կապուտիկյանը, Ա. Լուպանը, Մ. Իսահիմը: Վ. Զվյագինցևան կարդաց Վ. Նորենցի՝ Մաշտոցին նվիրված բանաստեղծության իր թարգմանությունը:

Մայիսի 26-ին իրիկնադեմին հազարավոր երևանցիներ էին հավաքվել Մաշտոցի անվան Մատենադարանի հրապարակում՝ Մաշտոցի արձանի բացմանը նվիրված միտինգի: Միտինգը բացեց Երևանի քաղաքային սովետի նախագահ Ս. Վարդանյանը: Ապա ձայներ տրվում է սովետահայ նշանավոր վիպասան Ստ. Զորյանին: Այնուհետև հանդես են գալիս ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ Ս. Պետրոսյանը, դպրոցի դիրեկտոր Դ. Թովմասյանը, լիրանանահայ անվանի բանաստեղծ Վահե Վանյանը, Մաշտոցի անվան Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանը, աշակերտուհի Ա. Պարսամյանը:

Մեծ խանդավառության մթնոլորտում անցավ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված հորելյանական ռեսպուբլիկական հանդիսավոր նիստը, որը տեղի ունեցավ մայիսի 27-ին, Ա. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական թատրոնում: Բացելով հանդիսավոր նիստը, հորելյանական կառավարական հանձնաժողովի նախագահ, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Քոչինյանը ասաց. «Հարգելի ընկերներ՝, թանկագին հյուրե՛ր և բարեկամնե՛ր:

Այս օրերին Հայաստանի աշխատավորները Սովետական մեծ Միության բոլոր ժողովուրդների հետ, խորին երախտագիտությամբ ու մեծ հանդիսավորությամբ տոնում են հայ գրերի ստեղծող և հայ դպրության հիմնադիր, մեծ գիտնական ու հայրենասեր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը:

Մեր ժողովուրդը դարերի ընթացքում շատ փորձություններ է կրել, թշնամու արյունոտ յաթաղաներ շատ անգամ ծանրացել է նրա վրա, բայց նա երբեք չի ընկճվել։ Անցնելով պատմության ծանր, հերոսական քառուղիներով, կյանքի մեծ փորձով և հոգևոր հարուստ գանձերով նա կանգնեց մեր դարի շեմքին։

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ հայ ժողովուրդը մտավ սոցիալիստական ազգերի հզոր բանակի մեջ իբրև նրա իրավահավասար մի ջոկատը։

Սովետական իշխանությունն էր, որ մեսրոպատառ գրականություններ գարձրեց ողջ ժողովրդի սեփականություն և մայրենի այբբենարաններ բացեց ամեն մի հայ մանուկի առաջ։ Օտարների կողմից հալածված հայոց լեզուն լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ դարձավ պետական լեզու և այժմ ապրում է իր ծաղկման իսկական ոսկեդարը։

Սովետական իշխանության տարիներին հայերեն լեզվով մեր ռեսպուբլիկայում գրվել և լույս է տեսել շատ ավելի գիրք, քան անցած 1500 տարիների ընթացքում։ Հայ աշխատավորը մայրենի լեզվով հին, նոր և նորագույն հեղինակների երկերի հետ միասին կարդում է համաշխարհային գրականության և գիտության դասական գործերը, հաղորդակից դառնում մարդկության առաջավոր մտքին ու մշակույթին։

Տոնելով հայ գրերի և գրականության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը, հայ ժողովուրդն այսօր երախտագիտության սրտաբուխ խոսք է ուղղում Սովետական Միության Կոմունիստական պարտիայի լենինյան Կենտրոնական Կոմիտեին՝ բացառիկ այն պայմանների համար, որ ստեղծվել են բոլոր ժողովուրդների ազգային կուլտուրաների անհարաբնաց ծաղկման և բարգավաճման համար»։

Այնուհետև Ա. Քոչինյանը ներկաների բուռն ծափահարությունների ներքո ջերմորեն ողջունում է թանկագին հյուրերին՝ միութենական ռեսպուբլիկաներից ժամանած պատվիրակներին, ինչպես նաև սփյուռքահայության ներկայացուցիչներին։ Ապա նա ելկուցման համար խոսքը տալիս է ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանին։ (ԳԱ պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի զեկուցումը տպագրվում է «Պատմա-բանասիրական հանդեսի» այս համարում)։

Ողջույնի խոսքով հանդես են գալիս Ուկրաինայի Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Կ. Ցելույկոն, Բելոռուսիայի ԳԱ Արվեստի և Լինգրաֆիայի ինստիտուտի դիրեկտոր Պ. Դեներկոն, Ուզբեկստանի ԳԱ Լեզվի և գրականության ինստիտուտի սեկտորի վարիչ Դ. Աբդուռահմանովը, Վրաստանի ԳԱ ակադեմիկոս Ա. Շանիձեն, Ադրբեջանի ԳԱ թղթակից-անդամ Մ. Շիրալիևը, Լիտվայի ԳԱ թղթակից-անդամ, դրող Ա. Վենցլովան, Մոլդավիայի ԳԱ թղթակից-անդամ, Պատմության ինստիտուտի դիրեկտոր Ն. Ռուսսեր, Լատվիայի ԳԱ թղթակից-անդամ Է. Ավիմսյուլ-Սոկոլը, Կիրգիզիայի ԳԱ աշխատակից Ա. Թուրսունովը, Թուրքմենիայի ԳԱ թղթակից-անդամ Զ. Մուխամեդովան, Էստոնիայի ԳԱ Պատմության ինստիտուտի դիրեկտոր Վ. Մամայագը, լիբանանահայ անվանի դրող Աբմեն Դարյանը, ամերիկահայ բիսքիմիկոս, պրոֆեսոր Մանասե Սեակը, սփյուռքահայ հայտնի դրող Վահե Հայկը։

Հանդիսավոր նիստի վերջում Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի փիցե-պրեզիդենտ Ա. Հովհաննիսյանը հրապարակում է հոբելյանական հանձնաժողովի անունով Սովետական Միության տարբեր վայրերից, գիտական հաստատություններից և գիտության ու գրականության ականավոր գործիչներից ստացված ողջույնի մի շարք հեռագրեր։

Մաշտոցի հոբելյանի առթիվ մայիսի 27-ին Օշականում տեղի ունեցավ հայ դպրության հուշարձանի հանդիսավոր բացումը։

Մայիսի 28-ին կառավարական հոբելյանական հանձնաժողովը Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի կապակցությամբ ընդունելություն կազմակերպեց։ Ընդունելությանը ներկա էին նաև եղբայրական ռեսպուբլիկաների պատվիրակները, սփյուռքահայ աշխատավորության ներկայացուցիչները։

Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ

Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի հրավերով Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, Միջազգային աստղագիտական միության պրեզիդենտ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը 1962 թ. հունիսի 6-ից մինչև 20-ը եղավ Ռումինիայում։ Տեղի ունեցան մի շարք հանդիպումներ, զրույցներ, այցելություններ, զեկուցումներ ժամանակակից աստղագիտության պրոբլեմների շուրջ։ Ակադեմիկոս Համբարձումյանը ծանոթացավ ռումինական մի շարք գիտա-հետազոտական հաստատությունների աշխատանքներին, եղավ «Մամայա» հայտնի առողջարանում և Վ. Ի. Լենինի

անվան ջրակլեկտրակայանում, Կլուժ քաղաքում, ՌԺՌ-ի Գիտությունների ակադեմիայի տեղական բաժանմունքի և Կլուժի համալսարանի դահլիճում դասախոսություն կարդաց «Մեծ տիեզերքը» թեմայով։ Այնուհետև նա հրապարակային դասախոսությամբ հանդես եկավ Բուխարեստի Աթենեում դահլիճում։ Դասախոսություններ ներկա էին Ռումինիայի ԳԱ ակադեմիկոսներ, թղթակից-անդամներ, պրոֆեսորներ և բազմաթիվ այլ ունկնդիրներ։ Իր բացման խոսքում Բուխարեստի աստղադիտարանի դիրեկտոր, ակադեմիկոս Կ. Դիմիտրեսկուն ընդգծեց Վ. Հ. Համբարձումյանի՝ աստղագիտության և աստրոֆիզիկայի բնագավառին վերաբերող աշխատությունների գիտական բացառիկ արժեքը։ Դասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը այցելեց Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի նախագահություն, ուր տեղի ունեցավ հանդիպում Ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Ժոժայի, ակադեմիայի նախագահության անդամների և ակադեմիկոսների հետ։ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում Վ. Հ. Համբարձումյանը հանդես եկավ «Արտագալակտիկ աստղագիտության հարցերը» զեկուցումով, որը լսվեց մեծ ուշադրությամբ։

Հունիսի 19-ին Վ. Հ. Համբարձումյանը այցելեց «Նոր կյանք» հայկական թերթի խմբագրություն։ Թերթի խմբագրության աշխատակիցները և այնտեղ հավաքված՝ Ռումինիայի մայրաքաղաքի հայ մտավորականությունը թանկագին հյուրին ընդունեցին ջերմորեն։ Տեղի ունեցավ մտերմական, սիրալիր զրույց, որի ընթացքում Վ. Հ. Համբարձումյանը մի շարք տեղեկություններ տվեց Բյուրականի աստղադիտարանում ներկայումս կատարվող աշխատանքների վերաբերյալ և իր ուրախությունը հայտնեց այն կապակցությամբ, որ տեղի հայ բնակչությունը եռանդագին մասնակցություն է ցուցաբերում Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի աննախընթաց վերելքին և սոցիալիզմի կառուցմանը։ «Նոր կյանք» թերթի խմբագրություն կատարած այցելությունից հետո Համբարձումյանը եղավ Ստեփան Շահումյանի անվան հայկական մշակույթի տանը։

Հունիսի 20-ին Վ. Հ. Համբարձումյանը հրաժեշտ տվեց Բուխարեստին։ Օդանավակայանում ականավոր գիտնականին ճանապարհելու էին եկել ՌԺՌ-ի ԳԱ փոխնախագահ Ի. Գեորգիուն, ակադեմիկոսներ Վ. Մալինսկին, Խ. Հոլուբեյը, Բուխարեստի աստղադիտարանի դիրեկտոր, ակադեմիկոս Դիմիտրեսկուն, գիտնականներ, մամուլի ներկայացուցիչներ։ Ներկա էր նաև Սովետական Միության դեսպանատան առաջին բարտուղար Ռ. Զվոնկովը։

Ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի այցելությունը և նրա կարդացած դասախոսությունները լայն արձագանք գտան տեղական մամուլում մասնավորապես «Սկինտեյա» և հայկական «Նոր կյանք» թերթերում։

Հ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԵԹԱՐՁՆԵՐ

1962 թ. հուլիսի 7-ին լրացավ սովետական ականավոր գիտնական, հռչակավոր ֆիզիոլոգ Լևոն Արգարի Օրբելու ծննդյան 80-ամյակը։

Դեռևս Պետերբուրգի ռազմա-բժշկական ակադեմիայում ուսանելու տարիներին արտակարգ ընդունակությունների շնորհիվ ապագա գիտնականը արժանանում է իր մեծ ուսուցչի՝ Ի. Պ. Պավլովի ջերմ ուշադրությանը։ Աշխատելով ռուս անհաղթ ֆիզիոլոգի ղեկավարած լաբորատորիաներում, նա հարստացնում և խորացնում է իր գիտելիքները, ձեռք բերում գիտական մեծ փորձ։

Սկսած 1913 թվականից Լ. Օրբելին ղեկավարում է մի շարք գիտական հաստատություններ, ստեղծելով բեղմնավոր գիտա-հետազոտական աշխատանք՝ ֆիզիոլոգիայի տարբեր բնագավառներում։ Առանձնահատուկ նշանակություն ունեն սիմպատիկ նյարդային համակարգության ֆունկցիաների վերաբերյալ Լ. Օրբելու ուսումնասիրությունները, որոնց մեջ ականավոր գիտնականի առաջ քաշած նոր տեսությունը խոշոր ներդրում էր համաշխարհային գիտության գանձարանում և նոր ուղիներ էր բացում ֆիզիոլոգիայի հետագա զարգացման համար։ Ի. Պ. Պավլովն ընդգծել է, որ Օրբելու այդ նոր ուսմունքը բացահայտեց «սնուցիչ նյարդավորման հետ կապված գրեթե հարյուրամյա դաղտնիքը, որը պիտի ընդգրկի կենդանական աշխարհի ինչպես ֆիզիոլոգիական, այնպես էլ ախտաբանական երևույթների մի մեծ խումբ»։

Ակադեմիկոս Լ. Օրբելին ստեղծում է նոր տեսություն փոքր ուղեղի ֆունկցիաների մասին։ Ստանալով չափազանց հետաքրքիր տվյալներ, նա վարպետորեն դրանք սինթեզում է սիմպատի-

ազդեցությունների ուսումնասիրության ժամանակ բացահայտված փաստերի հետ. այսպես է ծագում մեծ գիտնականի պատկերացումը փոքր ուղեղի՝ որպես օրգանիզմի բոլոր հիմնական ռեֆլեկտոր աղեղների կարգավորչի ու կայունացնողի մասին։

Հռչակավոր գիտնականը խոշոր ավանդ է ներդրել նաև անալիզատորների ֆիզիոլոգիայի հարցերի մշակման գործում։ Իր աշխատակիցների հետ նա կատարել է մի շարք կարևոր հետազոտություններ ցավային զգայության, տեսողության ու լսողության ֆիզիոլոգիայի, օրգանիզմի աֆերենտ սիստեմների փոխհարաբերության առանձնահատկությունների ուսումնասիրության ուղղությամբ, տվել է հաջորդական պատկերների մեթոդի տեսական հիմնավորումը, փայլուն հաջողությամբ լուծել բազմաթիվ գիտական կարևորագույն պրոբլեմներ։

Ակադեմիկոս Ի. Պ. Պավլովի մահից հետո (1936) Լ. Օրբելին ձեռնամուխ է լինում իր մեծ ուսուցչի գիտական վիթխարի ժառանգության հետագա մշակման ու զարգացման պատվավոր և պատասխանատու գործին։ Գլխավորելով պավլովյան խոշորագույն կոլեկտիվները՝ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Ֆիզիոլոգիայի ինստիտուտը և Կոլտուշի բիոլոգիական կայանը (հետագայում՝ Բարձրագույն նյարդային գործունեության, Էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և պաթոլոգիայի ինստիտուտ), Լ. Օրբելին իր նվիրված ու եռանդուն աշխատանքով ապահովում է տայրենական ֆիզիոլոգիայի բազմակողմանի զարգացումը, ամրապնդում այդ ինստիտուտների համբավը՝ որպես ֆիզիոլոգիական մտքի համաշխարհային կենտրոնների։ Լ. Օրբելու հետազոտությունները հսկայական նշանակություն են ունեցել բժշկագիտության բազմաթիվ պրակտիկ պրոբլեմների լուծման համար։



Լ. Օրբելին Սոցիալիստական Աշխատանքի Հերոս էր, բժշկական ծառայությունների գեներալ-գնդապետ։ Նա ընտրվել է արտասահմանյան մի շարք երկրների գիտությունների ակադեմիաների և գիտական ընկերությունների պատվավոր անդամ։ Հ. Օրբելին Հայկական ՍՍՌ ԳԱ կազմավորման առաջին իսկ օրից նրա ակադեմիկոսն էր։

Աշխարհահռչակ գիտնականի բեղմնավոր գործունեությունը Հայրենիքին և գիտությանը անձնվեր ծառայելու փայլուն օրինակ է։

* *

Լրացավ Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Գեղամ Խաչատուրի Ադաջանյանի ծննդյան 70 տարին։

Մեր ռեսպուբլիկայի գյուղատնտեսության աշխատողները լավ են ճանաչում անվանի գիտնականին, որն իր բոլոր ուժերն ու եռանդը նվիրել է Հայաստանի գյուղատնտեսության զարգացման, երիտասարդ մասնագետ կադրեր պատրաստելու գործին։

Գ. Ադաջանյանը ծնվել է 1891 թ. Սուրմալուի գավառի Ռլուր գյուղում։ 1913 թ. ավարտելով Երևանի ուսուցչական սեմինարիան, նա երկար տարիներ մանկավարժական աշխատանք է կատարում Անդրկովկասի դպրոցներում։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից հետո նոր հեռանկարներ են բացվում ապագա գիտնականի առջև։ 1926 թ. նա ավարտում է Երևանի Պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը ստանալով ագրոնոմի մասնագիտություն։ Շուտով Գ. Ադաջանյանն անցնում է գիտական-մանկավարժական աշխատանքի։ 1930 թ. նա նշանակվում է նորաստեղծ Գյուղատնտեսական ինստիտուտի ընդհանուր երկրագործության ամբիոնի վարիչ և մինչև օրս էլ աշխատում է այդ պաշտոնում։ Նա միաժամանակ մոտ տասը տարի (1941—1951 թթ.) եղել է ինստիտուտի դիրեկտորի տեղակալ ուսումնական և գիտական գծով։

Պրոֆ. Գ. Ադաջանյանի գրչին են պատկանում շուրջ 30 գիտական աշխատություններ, որոնք նվիրված են մոլախոտերի դեմ մղվող պայքարի, հացահատիկային կուլտուրաների, շաքարի ճակնդեղի, կարտոֆիլի, բամբակենու մշակության և գյուղատնտեսության ագրոտեխնիկայի բազմաթիվ խնդիրների լուսաբանությանը։ Պրոֆ. Գ. Ադաջանյանը արժեքավոր ուսումնասիրություններ է կատարել նաև հողի ֆիզիկական հատկանիշների լավացման և նրա էֆեկտիվ բերրիության բարձրացման ուղղությամբ, հետազոտել է Հայաստանի աղակալած և ճահճակալած հողերի յուրացման հարցերը։

Պրոֆ. Գ. Ադաջանյանն իր բազմաթիվ արժեքավոր հետազոտություններով հարստացրել է ագրոնոմիական գիտությունը։ Նրա աշխատանքներից շատերը ունեն գործնական նշանակություն՝ գյուղատնտեսության առջև ծառացած հրատապ խնդիրները լուծելու տեսակետից։ Նա գրել է նաև մի շարք ուսումնական ձեռնարկներ։

Պրոֆ. Գ. Ադաջանյանը պարգևատրվել է Լենինի երկու շքանշանով, «Պատվո նշան» շքանշանով և մեդալներով։ Բազմավաստակ գիտնականը այսօր էլ մեծ եռանդով ու նվիրվածությամբ շարունակում է իր գիտական-մանկավարժական բեղմնավոր գործունեությունը։

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՃՅԱՆ

1962 թ. հունիսի 25-ին, Կահիրե քաղաքում, 83 տարեկան հասակում վախճանվեց բազմավաստակ բանասեր, պատմաբան, հրապարակախոս, հասարակական-մշակութային գործիչ Արշակ Ալպոյաճյանը։

Գրական-հրապարակախոսական ասպարեզ մտնելով դարասկզբին, նա ավելի քան վեց տասնամյակ զբաղվել է հայ ժողովրդի պատմության հարցերի բազմակողմանի ուսումնասիրությամբ, հրատարակելով քսանից ավելի ստվարածավալ գրքեր, հարյուրավոր հոդվածներ, որոնք փաստական հարուստ նյութ կարող են տալ ոչ միայն հայ ժողովրդի պատմությամբ զբաղվողներին, այլև նրա մշակութային կյանքի տարբեր բնագավառները (գրականություն, թատրոն, տնտեսություն, աշխարհագրություն և այլն) հետազոտողներին։



Ա. Ալպոյաճյանը ծնվել է Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում, 1879 թ. հունիսի 7-ին։ Նախնական կրթությունն ստացել է Պերպերյան վարժարանում, ապա ուսումը շարունակել Կենտրոնական վարժարանում և ավարտել 1899 թ.

1901 թ. «Բազմավեպում» տպագրվում է նրա «Սրբուհի Տյուսար» աշխատությունը։ Ալպոյաճյանը կարճ ժամանակում դառնում է «Մասիս», «Ծաղիկ», «Բյուզանդիոն» և այլ պարբերականների եռանդուն աշխատակիցներից մեկը, իր ստորագրությամբ կամ ծածկանունով (Ս. Անդեղյա) տպագրելով պատմա-բանասիրական բնույթի ընդարձակ հոդվածներ։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և հաջորդող հրդեմյակում Ալպոյաճյանը պաշտոնավարում է Կ. Պոլսի Ծսայան վարժարանում, որպես պատմության ուսուցիչ, միաժամանակ շարունակելով գրական-բանասիրական բեղուն գործունեությունը։ 1919 թ. հրատարակում է «Անհետացած գեմքեր. Գրիգոր Զոհրապ» խորագրով աշխատությունը։ Ծիշտ է՝ հեղինակը ոչ այնքան նպատակ է դրել տալ Զոհրապի գեղարվեստական ստեղծագործությունների հանդամանալից վերլուծությունը, որքան գրողի մանրամասն կենսագրությունը, հասարակական մշակութային գործունեությունը, սակայն դրանով հանդերձ Ալպոյաճյանի գիրքը Զոհրապի մասին գրված առաջին ծավալուն մենագրությունն է և շատ կողմերով ճանապարհ է հարթել հետագա հետազոտողների համար։

1923 թ. Ալպոյաճյանը մեկնում է Եգիպտոս, պաշտոնավարում Կահիրեի Գալուստյան ազգային վարժարանում որպես ուսուցիչ։ Այդ պաշտոնում նա մնում է մինչև 1926 թ., երբ նշանակվում է Կահիրեի ազգային առաջնորդարանի դիվանապետ։

Այս տարիներից Ալպոյաճյանի գրիչը դառնում է ավելի ու ավելի բեղմնավոր։ Օգտագործելով իր կուտակած վիթխարի նյութը, նա ձեռնարկում է պատմական Հայաստանի և Թուրքիայի մի շարք գավառների ու քաղաքների հայերի պատմության շարադրմանը։ Այս տեսակետից ուշադրության արժանի է Կեսարիա քաղաքի ու նրա շրջակայքի հայերի մանրամասն պատմությունը, որ նա հրատարակեց Կահիրեում, 1937 թ. «Պատմություն հայ Կեսարիո» վերնագրով երկու ստվար հատորներով։ Նույն բնույթի և գրեթե նույնպիսի ստվար աշխատություններ են «Պատմություն Եվդոկիո հայոց» (Կահիրե, 1952), «Հուշամատյան կուտինահայերու» (Բեյրութ, 1961) և «Պատմություն Մալաթիո հայոց» (Բեյրութ, 1961) գրքերը։

Ա. Ալպոյաճյանը խոշոր աշխատանք է կատարել հայ գաղթականության պատմության ուսումնասիրման գործում, գրելով ծավալուն մի աշխատություն, որի առաջին հատորը լույս տեսավ 1941 թ., Կահիրեում։ Այն ընդգրկում է հայ գաղթականության պատմությունը սկզբից մինչև XI դարը և պարունակում է ուշագրավ տեղեկություններ պարսկական, բյուզանդական և արաբական տիրապետության շրջաններում Հայաստանից կատարված մասսայական գաղթի մասին։ Աշխատության երկրորդ հատորը, որ լույս է տեսել 1955 թ. և ընդգրկում է XI դարից մինչև XV դարը, պատմում է սելջուկյան, մոնղոլական, թաթարական տիրապետությունների տարիների գաղթականության մասին։ «Պատմություն հայ գաղթականության» գրքի երրորդ հատորի առաջին մասը լույս տեսավ անցյալ տարի. այն ընդգրկում է մոտ 5 դարի հայ գաղթականության պատմությունը։

Ալպոյաճյանին երկար տարիներ զբաղեցրել է նաև հայ ժողովրդի կրթական կյանքի պատմությունը։ 1947 թ. Կահիրեում լույս է տեսել նրա «Պատմություն հայ դպրոցին» աշխատության առաջին հատորը։

Նա թողել է բազմաթիվ անտիպ աշխատություններ, որոնք իրենց քանակով և պատմագիտական արժեքով կարող են մրցել հրատարակվածների հետ։ Այնպիսի կարևոր հետազոտություններ, ինչպիսիք են «Արմենակ Հայկունու կյանքը և գործը», «Բյուզանդ Քեչյան», «Վահան Թեքեյան» և այլ գրքեր, որոնք հարուստ ատաղձ կարող են տալ հայ մշակույթի, հատկապես լրագրության պատմության համար։

Երկար տարիներ ունենալով ջերմ ցանկություն՝ այցելել մայր Հայրենիք, Ա. Ալպոյաճյանը 1958 թ. եկավ Հայաստան, ծանոթացավ սովետահայ մշակույթի բոլոր ճյուղերին, եղավ գիտական, կրթական հիմնարկություններում, հանդիպումներ ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի աշխատողների հետ, հայտնեց իր հիացմունքը վերածնված հայ ժողովրդի մշակույթի աննախընթաց վերելքի մասին։ Նրա ցանկությունն էր կրկին այցելել Հայաստան, մասնակցել Մաշտոցյան տոնակատարություններին, բայց նույն այն օրերին, երբ Երևանում մեծ հանդիսավորությամբ նշվում էր պատմական այդ տարեթիվը, ծերունազարդ գիտնականը ապրում էր իր վերջին օրերը՝ երկարատև հիվանդությունից ջլատված ու քայքայված։ Նա ֆիզիկապես հնարավորություն չունեցավ մասնակցելու Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի հանդեսներին, բայց հայ ժողովրդին համակած ցնծությունը հոգում՝ փակեց իր հոգնաբեկ աչքերը։

Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ